բայց առանց հետևանքի։ Խաղաղությունը վերականգնեց. բնակիչների մեծ կրկին վերադարձաւ վստահությունը դէպի բարձրագոյն իշխանությունը, այնպէս որ կէս տարի գործելուց յետոյ, ծայրագոյն կարգադրիչ մասնաժողովը վերացուեց, նորա հետ և այսպէս կոչուած III-րդ բաժինը (դաղանի ոստիկանությունը քաղաքական յանցանքների համար)։

Կոմս Լոռու-Մելիքեանը այնուհետև նշանակուեց մինիստր ներքին գործերի, որտեղ նա բանեցրեց զարմանալի գործունէություն, դարձնելով իւր ուշքը ներքին կեանքի բոլոր ճիւղերի վրայ և ղեկավարելով իւր մարդասէր սկզբունքներով։ Նա վարեց իւր պաշտօնը մինչ կայսր Ալեքսանդր II-ի ողբերգական մահը, որից յետոյ կոմսը իրեն յանձնեց մասնաւոր կեանքին, ուր և դտաւ իւր կեանքի վախճանը։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ուշադրություն ենք դարձնում մեր մշտական աշխատակից պետական գիտությունների Ստրասբուրգի համալսարանի դոքտոր պ. Գրիգոր Վարդանեանցի ներկայ համարում տպած յօդուածի վրայ «Գիւղական վարկի» մասին։ Դա՝ «Մուրճ» ամսագրի համար ամենաթանգ և մեր սրտին ամենամօտիկ խնդիրներից մէկն է, որպէս մէկը այն խնդիրներից, որոնց լուծումից մեր ժողովրդական բարօրությունն է կախուած։ Յօդուածը գրուած է յատկապէս մեր յանձնարարությամբ և կ'ունենայ չարունակություններ՝ իրարից անկախ և բոլորովին ամփոփ ձևով և բովանդակությամբ։ Որպէս նորություն մեր գրականության մէջ, ինչպէս նաև պ. Եաղուբեանի «Դատաստանական վերանորոգությունն» յօդուածը, որ նմանապէս գրուած է խմբագրությունից բղխած նախագծով, մեր՝ մանաւանդ գաւառական աշխատակիցներին՝ յատուկ յանձնարարում ենք ուսանել այդ յօդուածները։ Ոչ կրկնուր կերպով, այլ հիմնաւորապէս է մեզ պէտք ուսանել ժողովուրդը, իսկ դորա համար հարկաւոր է, որ նաև գաւառական գրողները խնդիրների էությունը ամբողջապէս ըմբռնեն ու այնպէս գրիչ առնեն ձեռքը։— Մենք թոյլ ենք տալիս աւելցնել այստեղ, որ «Մուրճ» ամսագրում «Գիւղական վարկի» մասին գրողը նոյն հեղինակն է, որը Գերմանիային առաջին անգամ տուեց մի հիմնաւոր ուսումնասիրություն կալուածատիրական և գիւղական վարկի հիմնարկությունների մասին, գրելով գիւղական վարկի դասական երկրի, այն է Պրուսիայի Սիլեզիա պրովինցի վարկային հաստատությունների պատմությունը, նոցա սկզբնաւորությունից, այն է 18-րդ դարու կիսից մինչև այժմ։ Այդ հեղինակությունը, որի համար հեղինակը օգտուած է տեղական վարչությունների մատակարարած և ոչ ամենքին մատչելի առաջնակարգ աղբիւրներից, կրում է հետևեալ վերնագիրը.

Geschichte des Landschaftlichen Creditsystems für die Provinz Schlesien. Strassburg 1883.